

# ՀԱՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ուրախությամբ ենք արձանագրում այստեղ այն, որ Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և մեր հայրենի բարեխնամ կառավարության բարյացակամ արտոնությամբ, այս տարի ավելի լայն հնարավորություններ ստեղծվեցին Սփյուռքի մեր հայ հավատացյալների համար, որոնք կցանկանային ուխտի գալ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և այցելել մեր սիրելի Հայրենիքը։

Սփյուռքի զանազան վայրերից, ուխտավորների առաջին երջանիկ խմբերը արդեն հասան Մայր Աթոռ ու Հայրենիք։

Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը, մեր Հայրենիքի գաղափարն ու լուսաշող իրականությունը նվիրական ու թանկ են եղել ամեն մի հավատացյալ ու հայրենասեր հայ մարդու համար։ Հեռավոր Ամերիկայում թե հարավի ջերմ արևի տակ, Նեղոսի հովտում, թե Գանգեսի ափին ապրող ամեն մի հայ ազգային հպարտության ամենաանկեղծ ու վառ զգացմունքներով, իր հոգու բովանդակ ջերմությամբ կապված է եղել Ս. Էջմիածնին և Մայր Հայրենիքին,

Ս. Էջմիածինը իր հնադարյան սրբություններով, մեր վերածնված Հայաստանը իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ուժ, բերել են այս անգամ էլ մեր հավատացյալ ուխտավորներին ու համախմբել Լուսավորչի պատմական ու սուրբ Աթոռի շուրջը, նրա արժանավոր Գահակալի շուրջը, հաղորդվելու մեր սրբությունների հետ և Հայրենիքի կարոտն առնելու, ողջագուրվելու Մայր Երկրի հայության հետ։ Մեր ժողովրդի պատմության հիմնական առանձնահատկություններից մեկն է եղել եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը սերտ կապված երևան բերել մեր ազգային-եկեղեցական կյանքի բոլոր բնագավառներում։

Հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսները այս տարի եղան ուխտավորների ամիսներ։ Մայր Աթոռ ուխտի էին եկել հալեպահայ, ֆրանսահայ, բուլղարահայ, ռումինահայ, բելգիահայ և ամերիկահայ ուխտավորների խմբերը։

Ուխտավորները երկյուղածությամբ և ջերմեռանդորեն կատարեցին իրենց ուխտերը, ներկա եղան սուրբ պատարագի ու եկեղեցական այլ ծիսակատարություններին, մխիթարվեցին բանին կենաց քարոզությամբ, սուրբ հաղորդություն ստացան, եղան Վեհափառ Հայրապետի մոտ, իրենց սրտագին լուման զգեցին Ս. Լուսավորչի զանձանակի մեջ, այցելեցին մեր պատմական կոթողները, աղոթեցին ու հսկեցին Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի, Գեղարդի, Խոր Վիրապի, Օշականի և այլ վանքերի կամարների տակ, շրջագայեցին հայրենի աղջ երկիրը, եղան Երևանում, Սևանում, Զվարթնոցում, մեր գործարաններում, գպրոցներում, հիմնարկներում, կոլտնտեսային դաշտերում, զվարթ սեղանների առաջ, եղբայրորեն ճաշակեցին Հայրենի երկրի բարիքները, հացն ու աղը, և եկեղեցական-հայրենասիրական խանդավառությամբ տրոփեց նրանց բոլորի սիրտը։

Ուխտավորները տուն վերադարձան լավագույն ու անմոռանալի տպավորություններով։

Մեկնողների վերջին խումբը եղավ Կալիֆորնիայի ուխտավորների խումբը։

***

Սեպտեմբերի 10-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտի ճաշկերույթ տվեց ի պատիվ ամերիկահայ ուխտավորների։ Սեղանի վրա ջերմ ու սրտագին ճառեր ու խոսքեր եղան, որոնք արտահայտում էին տարագիր, բայց հայրենակարոտ ամերիկահայության սերն ու պաշտամունքը Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության, Հայրենի Հողի ու հնադարյան սրբությունների հանդեպ։ Նրանք բոլորը իրենց զգացված շնորհակալությունն ու երախտիքն էին հայտնում Վեհափառ Հայրապետին և Հայրենի կառավարության՝ իրենց ընծայված այդ բախտավորության համար։

Ուխտավորներից Դ. Պ. Մելիքյանն ասաց «Շնորհակալ և երախտապարտ ենք ես և ընկերներս, որ Վեհափառ Հայրապետը միջոց եղավ, որ իրը ուխտավորներ այցելենք մեր սիրելի Հայաստանն ու իր սրբավայրերը։ Արժանացանք մոտեն ճանաչելու Ձեզ, Վեհափա՛ռ Տեր, որպես ազնիվ, անկեղծ ու մշտապիտ Հովվապետ մը, որ օժտված է ամեն բարեմասնությամբ, ունի կորով, վարչական ձիրք ու հոգևոր եռանդ։ Մենք արժանացանք Ձեր ճոխ սեղանին, պատեհություն ունեցանք երթալու և տեսնելու ուր որ փափագեցանք, և երբ վերադառնանք, կպատմենք մարդուն Երևանի փողոցներում – թռչելիս, մարդկանց հետ խոսելիս, օդը շնչելիս, ջուրը խմելիս և առավոտները զարթնելով լուսամուտից Արարատ լեռը տեսնելիս։

ԱՄՆ-ում չկա և ոչ մի վայր Ս. Էջմիածնի հետ համեմատելու համար, որովհետև Ս. Էջմիածինը հազարավոր տարիների հնություն ունի, մինչդեռ ԱՄՆ-ը շատ երիտասարդ է համեմատության համար, երբ մեկին առիթը տրվում է տեսնելու հենց այն Դեղարդը, որ ծակեց Հիսուսի կողը, մարդ հնարավորություն չի ունենում արտահայտելու իր զգացմունքները։

Ամերիկահայ ուխտավորներ Վեհափառ Հայրապետի հետ

ինչ որ տեսանք, առանց չափազանցության։ Այս բոլորին համար կհայտնենք մեր շնորհակալությունները։

Ահա ասենք են իմ զգացումներս ու խոսքերս»։

Ուխտավոր Արաքսի Զիմյանը իր տպավորությունները ներկայացրեց հետևյալ կերպ.

«Հայաստանում շրջագայելու և Ս. Էջմիածին ուխտի գալու տարիների իմ երազանքը իրականացավ։

Անբացատրելի մի զգացում համակում է մարդուն Երևանի փողոցներում – թռչելիս, մարդկանց հետ խոսելիս, օդը շնչելիս, ջուրը խմելիս և առավոտները զարթնելով լուսամուտից Արարատ լեռը տեսնելիս։

Էջմիածինը ինձ համար եղել էր սուրբ մի անուն և երազ, իմ ծնողների շրթների վրա գտնվող մշտական մի անուն։ Այժմ այդ երազը իրականացել է։

ԱՄՆ-ում ծնվող մեզանից յուրաքանչյուրը հպարտ պետք է լինի մեր այս հոգևոր, պատմական ժառանգության համար։

Ես երբեք չեմ մոռանա այս ուխտագնացությունը դեպի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք և հուսով եմ, որ ապագայում մի երջանիկ օր նորից կտեսնեմ Ս. Էջմիածինն ու մեր գեղեցիկ Երևանը, և նորից կտեսնեմ

Արարատ լեռը իր ամբողջ մեծափառ շքեղությամբ։

Սիրելի Վեհափառ Տե՛ր, իմ և իմ ընկերների խորունկ շնորհակալությունը կհայտնեմ այս բացառիկ ու մեծ պատվի համար։ Մենք ուրախ առիթը ունեցանք ճանաչելու Ձերդ Վեհափառությանը ոչ միայն որպես մեր սիրելի Հայրապետը, այլև որպես հայրենասեր և աղնիվ անձնավորություն։ Մեզ համար մեծ երջանկություն և պատիվ է լինել Ձերդ Ս. Օծության հյուրը։ Թո՛ղ Աստված երկար կյանք պարգևի Ձեզ, Վեհափառ Հայր, որպեսզի Սփյուռքի վերջին հավատացյալն անգամ առիթն ունենա Ձեր գահակալության տարիներին գալու Ս. Էջմիածին և Հայրենիք ուխտ, և ստանալու Ձեր հայրապետական օրհնությունը։ Մենք մեր վերադարձին կպատմենք մեր անմոռանալի տպավորությունների մասին և վստահ ենք, որ ուխտավորների նոր խմբեր կգան մեր հետևից»։

Խորապես զգացված ամերիկահայ ուխտավորների այս սրտառուչ խոսքերից և վերաբերմունքից, ընդհանուր խանդավառության և ծափահարությունների մեջ, խոսք առավ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, որի սրտագին հայրապետական պատգամն ու օրհնությունը մի անգամ ևս փոթորկեցին ուխտավորների սրտերն ու հոգիները, Ս. Էջմիածնի անունով ու խոհերով և Մայր Երկրի լուսաշող ապագայով։

Ամերիկահայ ուխտավորներին ի պատիվ տրված ողջերթի ճաշկերույթը անցավ ջերմ, ընտանեկան մթնոլորտի մեջ։

Վերջում ուխտավորները ծնկի եկած համբուրեցին Վեհափառ Հայրապետի Ս. Աջն ու ստացան Նրա օրհնությունը։ Վեհափառ Հայրապետը օրհնեց նրանց ճանապարհը դեպի տուն։

Ամերիկահայ ուխտավորների խումբը մեկնեց տուն սեպտեմբերի 12-ին։

Բարի ճանապա՜րհ ձեզ, հավատացյալ և բարեպաշտ ուխտավորնե՛ր, ձեր ուխտը ընդունական լինի։